Հաշվետվություն

2018 թվականի մարտի 20-ից 23-ը Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև)՝ Համաշխարհային բանկի և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից համատեղ կազմակերպված զարգացման գործընկերների երկրորդ համաժողովի մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Կարապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 20.03.2018թ. – 23.03.2018թ.:

4. **Հրավիրող կողմը.**

   Համաշխարհային բանկի Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ կառույցի (GFDRR) գործադիր տնօրեն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Համաշխարհային բանկի Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ կառույցի (GFDRR) և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (WMO) կողմից համատեղ կազմակերպված զարգացման գործընկերների երկրորդ համաժողովի:

6. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվեցին հիդրոօդերևութաբանական ծառայություններում ներդրումների արդյունավետության բարձրացման ուղիները, ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների կարողությունների ամրապնդման հնարավորությունները՝ եղանակային, կլիմայական եւ հիդրոլոգիական ծառայությունների մատուցման բարելավման նպատակով:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Ներկայացվել է ԱԻՆ Հիդրոմետ ծառայության արդիականացման ճանապարհային քարտեզը, որը մշակվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ «Հայաստանի համար աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագրի» շրջանակներում:

8. **Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկվել է ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության արդիականացման ֆինանսավորմանը վերաբերող հարցեր:
Համաձայնություններ են ձեռք բերվել հունիսին Երևանում կայանալիք միջազգային դոնորների աշխատաժողովին մասնակցության վերաբերյալ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հիդրոմետ ծառայության արդիականացման ճանապարհային քարտեզի իրականացման համար հունիսին Երևանում կազմակերպել դոնորների աշխատաժողով՝ ամբողջական կամ մասնակի արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով:

10. **Գործուղվողը.**
Դավիթ Կարապետյան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**
26/03/2018թ.